* 1690 maggio 9 - Giovanni d'Abrancr armcno, 16 տարեկան պատանին, որի ծնողները մահմեդականացել էին, հեռացել էր իր երկրից չմահմեդականանալու եւ կաթողիկէ մնալու համար: Պապից խնդրում է պարսից շահին ուղղուած նամակներ՝ վերանորոգելու կաթողիկէների նկատմամբ արտօնութիւնները (Acta, col. 60, f. 118, n. 19, SOCG, vol. 607, f. 55, 56, 57): 1690 թ. մայիսի 11-ի նիստով Հաւատասփիւռի քարտուղարը պապին է ներկայացնում հարցը եւ պապը հաւանութիւն տալով, գտնում է որ գրուի ոչ միայն իր կողմից, այլեւ յորդորուի Լեհաստանի թագաւորին նոյնը անելու համար (Udicnzc, vol. 2, f. 374),
* 1691 Մարտի 10 - Նախիջեւանի հաւատացեալները նամակով պապին տեղեկացնում են իրենց գիւղերում հաւատափոխութեան բազում դէպքերի ու դրանով պայմանաւորուած ժողովրդի արտագաղթի մասին եւ օգնութիւն խնդրում (SC Armcni, vol. 4, f. 119r),
* 1692 Ապրիլ 22- Դաւիթ Աւանիսեանցը Հռոմում գտնուող Նախիջեւանի Պօղոս արքեպիսկոպոսին Սպահանից տեղեկացնում է, որ հայ կաթողիկէների հաւատափոխութիւնն ու փախուստը դէպի Թուրքիա համատարած է (SC Armcni, vol. 4, f. 224r-225v),
* 1693 Agosto Նախիջեւանի Fr. Paulo Batta arciv. Ապարաներից գրում է Հաւատասփիւռի քարտուղարին, որ 200 հոգի փախել են իր գաւառից մահմեդականների պատճառով (SC Armcni, vol. 4, f. 302rv)

Նախիջեւանի «նոր մահմեդականների» շարքերում յատկապէս մեծ էր ունեւոր դասի անդամների թիւը: Մահմեդականացող հայերը, որպէս կանոն, կոչւում էին նոր՝ մահմեդական բնակչութեանը բնորոշ անձնանուններով:

Բոնի թէ կամովին՝ դաւանափոխ հայի վերադարձը նորից դէպի քրիստոնէութիւն ընդհանրապէս ու գործնականում անհնար էր, նախադէպերը վերջանում էին դաւանափոխի մահուամբ: Սակայն աղբիւրներում հատուկենտ վկայութիւններ են հանդիպում նաեւ նման վերադարձի մասին: XVII դարում Արեւելեան Հայաստանում գրուած մի տաղարանում մատնանշւում է այն միակ ճանապարհը, որը նման վերադարձի հնարաւորութիւն է ընձեռում. «Կամայ յակա-